Ընդունելության թեստի նմուշօրինակ

2017-2018 ուստարի

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:

I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է հայերենի ուղղագրությանը և կետադրությանը վերաբերող 5 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

III մասում առաջարկվում է գրել ազատ շարադրություն՝ 3 թեմայից ընտրելով միայն մեկը: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր:

Շարադրությունը գնահատվում է երկու բաղադրիչով.

ա) բովանդակություն՝ 5 միավոր (տրամաբանություն, ինքնուրույն մտածողություն, ստեղծագործական մոտեցում),

բ) շարադրանքի որակ՝5 միավոր (ուղղագրություն, կետադրություն, բառագործածություն, քերականություն):

Թեստի առավելագույն գնահատականը 50 միավորն է:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. ***Լրացնել բաց թողած տառերը և երկհնչյունները.***

Միջ__րե, երբևից__, ուղ___արձ, նրբ__րեն, այժմ__ական, զե__չել, Անդր___ս, լաջվար__, քվ___թերթիկ, մ___կահողմ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները.

Հանդիսավոր _____ *Կոճկել*_____

Նշաձև _____ *Ծննդյան*_____

*Գերություն*_____ *Ծաղկել*_____

Գլխիկոր _____ *Հոգյակ*_____

Հուսահատ _____ *Ուղեգորգ*_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.

ընդ (դեմ), ի (զուր), ի (սպառ), կողք (կողքի), ուս (ուսի), կենաց (մահու), գիշեր (ցերեկ), զույգ (զույգ), հայ (ռուսերեն), ի (վերջո).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. *Առանձնացնել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.*

Գագիկ Առաջին, Վանա Լիճ, Մեծ Հայք, Տիգրան Բ, Պետրոս Գետադարձ, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա, Արևմտյան Հայաստան, Միջերկրական Ծով, Զաքարե Երկայնաբազուկ, <<Հայոց Դանթեականը>> Պոեմը, Արաբական Միացյալ Էմիրություններ, Երևանի Պետական Համալսարան, Դավիթ Անհաղթ, Հայաստանի Ազգային Պատկերասրահ, Ռուսաստանի Դաշնություն, Աշոտ Երկաթ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. *Կետադրել.*

Ամպամած երկնքում կուտակված թուխպերը կամաց-կամաց ցրվեցին և լուրթ երկնակամարում ժպտաց արեգակը իր անզոր ճառագայթները սփռելով շրջակա լեռների ձյունով ծածկված կատարներին: Դեպի արևմուտ խոնարհվելուց առաջ թվում է կամենում էր փոքր-ինչ մեղմել ցրտի խստությունը:

Ծովի լայնարձակ հեռուներում մայր էր մտնում արեգակը արտացոլվելով ծովախորշի ականակիտ ջրերում: Երկնքում լողում-անցնում էին բազմագույն ամպեր որոնց մեջ կային կրակի ցոլքեր և մահվան ստվերներ ոսկու աղոտ փայլ և արյան կարմիր: Կախարդական երեկոն արտացոլվում էր ծովի աղջամուղջից կամաց-կամաց կպրագույն դարձող հայելանման մակերեսին: Շուտով մութն ընկավ և ծովը թաղվեց խորհրդավոր խավարի մեջ:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

(1) Այվազովսկի և ծով. սերնդեսերունդ անցնելով՝ այս ըմբռնումները մարդու գիտակցության մեջ ասես նույնացել են: (2) Բանաստեղծական խորախորհուրդ ճշմարտությամբ նկարիչը պատկերել է ծովը, երգել է մարդու հավիտենական սերը բնության ու կյանքի նվիրական գաղափարներն իր մեջ կրող կապույտ, անսահման տարերքի նկատմամբ:

(3) Քիչ է, սակայն, ի դեմս Այվազովսկու միայն մեծատաղանդ ծովանկարիչ տեսնել. իր լավագույն գործերում, ինչպես ամեն մի մեծ նկարիչ, Այվազովսկին բացահայտել է իր ներաշխարհը, հոգեվիճակը, մարմնավորում տվել ժամանակի շնչով ապրող իր ոգուն:

(4) Մի առիթով Այվազովսկին ասել է. <<Ինձ համար ապրել նշանակում է աշխատել>>: (5) Առաջնորդվելով իր այս նշանաբանով՝ նա ասես մրցման ելավ երևակայության հետ՝ ստեղծելով շուրջ վեց հազար պատկեր, որոնց մեջ կան և՛ իր կարողություններին զիջող գործեր, և՛ մեծ ներշնչանքով արարված բացարձակ գլուխգործոցներ: (6) Ստեղծեց մի այնպիսի յուրօրինակ ոճ, որ նրա՝ բարձունքներ գրաված արվեստը դյուրին չէ զետեղել որևէ դպրոցի կամ ուղղության շրջանակներում:

(7) Այվազովսկին կյանքից հեռացավ քսաներորդ դարի սեմին, երբ եվրոպական և ռուսական նկարչությունը շարունակում էր նոր հորիզոններ նվաճել, ու թվում էր՝ նա արդեն ապրել է իր դարը:

(8) Իր պատկերած տարերքի հանդեպ պաշտամունքի հասնող սերը, ինքնօրինակ գեղանկարային լեզուն, արտակարգ ապշեցնող վարպետությունը և վերջապես նրա կտավների հուզական տաք շունչն ու կենդանի թրթիռը մշտապես ապահովում են Այվազովսկու արվեստի հավիտենականությունը:

(9) Այվազովսկին փառք է նվաճել իբրև ռուս նկարիչ և լայն ճանաչում բերել ռուսական արվեստին համայն աշխարհում: (10) Նրա ստեղծագործության հիմքում ընկած է բնության անսահմանության, նրա արարչագործ հզոր ուժի գաղափարը: (11) Ահեղ փոթորիկը՝ բնության այդ անընդդիմադրելի ուժը, նա ներկայացնում է տարերքի դեմ պայքարով միմյանց օգնող մարդկանց առկայությամբ: (12) Մարդը չի հանձնվի, մարդը կհաղթի, նկարչի այս կենսապաշտության մեջ իրենց արտացոլումն են գտել ժողովրդական բնավորությանը հատուկ լավատեսությունն ու տոկունությունը:

Ըստ Շ.Խաչատրյանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *Ինչպե՞ս կմեկնաբանեք Հ. Այվազովսկու հետևյալ խոսքերը. <<Ինձ համար ապրել նշանակում է աշխատել>>.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7*. 8-րդ նախադասությունից դուրս գրել մակդիրի գործածության 1 օրինակ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. *3-րդ նախադասությունից դուրս գրել 2 բարդ բառ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. *2-րդ նախադասությունից դուրս գրել ածանցավոր 4 բառ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. *2-րդ նախադասությունից դուրս գրել 4 բառ և յուրաքանչյուրի դիմաց գրել 1 հոմանիշ.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. *2-րդ նախադասությունից դուրս գրել հայցական հոլովով գործածված 2 գոյական.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *2-րդ նախադասությունից դուրս գրել 2 հարաբերական և 2 որակական ածական.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. *5-րդ և 6-րդ նախադասություններից դուրս գրել 2 անձնական դերանուն և որոշել հոլովը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *Որոշել 7-րդ նախադասության հեռացավ, ապրել է բայերի եղանակը և ժամանակաձևը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. *5-րդ նախադասությունից դուրս գրել 2 դերբայ և որոշել նրանց տեսակը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. *Նշել 6-րդ նախադասության տրոհված (հեռացած) հատկացուցիչը և հատկացյալը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. *9-րդ, 11-րդ և 12-րդ նախադասություններից ո՞րն է պարզ, գրել նախադասությունը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. *5-րդ նախադասությունից դուրս գրել տրոհված նախադաս (առաջադաս) դերբայական դարձվածը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. *Կազմել 9-րդ նախադասության գծապատկերը.*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. *4-րդ նախադասության ուրիշի ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակի խոսքի.*

ՄԱՍ III

Կատարել տրված 3 առաջադրանքից միայն մեկը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.1 II մասում տրված բնագրի հիման վրա համառոտ նկարագրել Հ.Այվազովսկու ստեղծագործությունները /նվազագույն ծավալը՝ 100 բառ/:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.2 Օգտագործելով բնագրում գործածված բառերը /15 բառ/՝ գրել <<Բնությունը՝ մեծ արարիչ>> վերնագրով ազատ շարադրություն /նվազագույն ծավալը՝ 100 բառ/:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.3 Գրել ազատ շարադրություն՝ <<Ծովն իմ ներշնչանքն է>> խորագրով /նվազագույն ծավալը՝ 100 բառ/:*